

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2021 թ. դեկտեմբերի 1-ին կայացած թիվ 5 նիստի

Գիտական խորհրդի նիստն անցկացվել է առցանց հեռավար համակարգով, խորհրդի 40 անդամներից նիստին մասնակցում էին 32-ը:

ԼՍԵՑԻՆ՝ Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմից ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուի առաջադրման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, դեկանի տեղակալ կ.գ.թ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Առաջադրվեց կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կենս. գիտ. թեկնածու Աննա Արշակի Փոլադյանի թեկնածությունը: Փակ գաղտնի քվեարկությունն անցկացվել է նույնպես հեռավար, որին մասնակցել են գիտական խորհրդի 31 անդամներ: Քվեարկության արդյունքներն ամփոփվել են համակարգչի օգնությամբ. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել փակ գաղտնի քվեարկության տվյալները, որոնց հիման վրա որպես ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածու առաջադրել կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Աննա Արշակի Փոլադյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ

Ի.Վ. Շահազիզյան